

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ Ս. Գայանե եկեղեցում, ձեռամբ Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի, կատարվում է քահանայական ձեռնադրություն Վարդգես սրկ. Մկրտչյանի և Գարուշ սրկ. Լավարյանի:

Նոյեմբերի 17-ին կատարվում է «Յերեկոյէ կոչումն քահանայութեան» կարգը ըստ ձեռնադրության Մաշտոցի, խարտավիլակությամբ Մայր Աթոռի միաբան Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանի: Հայր սուրբը վկայում է նորընծաների հոգեկան ու մտավոր պատրաստվածության և բարեմասնության ու արժանիքների մասին՝ նրանց ներկայացնելով արժանի քահանայական ձեռնադրության:

Հաջորդ օրը, նոյեմբերի 18-ին, ս. պատարագի արարողությունից առաջ, կատարվում է նորընծաների ձեռնադրության կարգը: Նորընծաները ծնրադիր առաջնորդվում են դեպի Ս. Խորան և ապա ձեռքերը բարձրացրած դառնում դեպի հավատացյալ բազմությունը, հրաժարվում աշխարհից՝ կոչվելու համար «ի սարկաւագութենէ ի քահանայութիւն սուրբ եկեղեցւոյ»: Այդ պահին սուրբ եկեղեցու կամարների տակ հնչում է հանդիսավոր ու հաղթական «Աստուածային և երկնային շնորհ, որ լնու կպէտս սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ» շարականը:

Այնուհետև նորընծաները մոտենում են ձեռնադրիչ Տ. Հուսիկ արքեպիսկոպոսին, որը իր ձեռքը դնում է յուրաքանչյուրի գլխի վրա և հանդիսավոր արտասանում ձեռնադրության աղոթքը. «Ես դնեմ կձեռս ի վերայ սոցա և դուք ամենեքեան աղօթս արարէք զի արժանի լինիցին սոքա կաստիճան քահանայութեան, անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ»: Դպրաց դասը միաբերան վկայում է. «Արժանի են»:

«Ողջոյն»-ից առաջ նորընծաները աղոթքով և օրհնությամբ ստանում են քահանայական փիլոն, սաղավարտ, փորուրար, ջուրջառ:

Մոտենում է ձեռնադրության խորհրդավոր պահը: Տ. Հուսիկ սրբազանը մեռոնանիշը ձեռքին մոտենում է նորընծաներին, օծում սրբալույս մեռոնով նրանց ճակատն ու ձեռքերը և վերակոչում՝ Վարդգես սրկ. Մկրտչյանին Տ. Վարդան քահանա, իսկ Գարուշ սրկ. Լավարյանին՝ Տ. Հուսիկ քահանա:

Այնուհետև ձեռնադրիչ արքեպիսկոպոսը բուրվառով խնկարկում ու օրհնում է նորընծաներին, իսկ նորընծաները իրենց հերթին դառնում են դեպի ժողովուրդը և տալիս իրենց առաջին քահանայական օրհնությունը:

«Ողջոյն»-ի պահին Տ. Հուսիկ սրբազանը ողջագուրվում ու շնորհավորում է նորընծաներին, որին հետևում են բոլոր «քահանայք և սարկաւագք»:

Ապա պատարագիչ սրբազանը արտասանում է ոգեշունչ քարոզ՝ վեր հանելով Հայ Առաքելական Եկեղեցու հոգևորականաց դա-

Մի պահ ձեռնադրության արարողությունից

սի նվիրվածությունը իր ժողովրդին ու հայրենիքին և մաղթում նորընծա քահանաներին՝ պատվով շարունակելու նախնյաց սուրբ ավանդությունները և միշտ բարձր պահելու հոգևորականի իրենց կոչումը:

Քարոզից հետո ս. պատարագը շարունակվում է մինչև վերջ:

Արարողության հաջորդ օրը, Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի գլխավորությամբ, նորընծաները առաջնորդվում են Վեհարան՝ ստանալու Վեհափառ Հայրապետի օրհնությունները և մաղթանքները:

Նորին Սրբությունը գոհունակությամբ և հայրական սիրով ընդունում է նորընծա քահանաներին և նրանց բարեմաղթում՝ լինել նվիրված իրենց կոչումին և առանց թերանալու ծառայել Հայ Եկեղեցուն և հայ ժողովրդին:

Երկու նորընծա քահանա հայրերը իրենց «քառասունքը» կանցկացնեն Մայր Աթոռում:

Տ. ՎԱՐԴԱՆ ՔՀՆ. ՄԿՐՏՉՅԱՆ

Տ. Վարդան քհն. Մկրտչյանը ծնվել է 1950 թվականին Երևանում: 1967 թ. ավարտում է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը: 1969—1972 թթ. ծառայում է սովետական բանակում: 1974 թ. ընդունվում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ և ավարտում 1979 թ.: Նույն տարում ընդունվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան: 1981 թ. ձեռնադրվում է սարկավագ՝ ձեռամբ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի:

1982 թվականին ավարտում է հոգևոր ճեմարանը և աշխատանքի անցնում Ս. Էջմիածնի «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում որպես քարտուղար: Ներկայումս աշխատում է նույն պաշտոնում:

Տ. ՀՈՒՍԻԿ ՔՀՆ. ԼԱՉԱՐՅԱՆ

Տ. Հուսիկ քհն. Լապարյանը ծնվել է 1955 թվականին Երևանում: 1972 թվականին գերազանց առաջադիմությամբ ավարտում է Երևանի Հովհաննես Պողոսյանի անվան միջնակարգ դպրոցը: 1974 թ. ընդունվում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ: Համալսարանը ավարտում է 1979 թ. և նույն տարին ընդունվում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան: 1981 թ., ձեռամբ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի, ձեռնադրվում է սարկավագ:

1982 թ. ավարտում է հոգևոր ճեմարանը և անցնում աշխատանքի հոգևոր ճեմարանում որպես քարտուղար:

Ներկայումս աշխատում է նույն պաշտոնին և դասավանդում ճեմարանում:

* * *

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է Տ. Վարդան և Տ. Հուսիկ քահանաներին և նրանց ցանկանում նորանոր հաջողություններ իրենց հոգևոր ասպարեզում: